**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

***Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի Թատերական փողոց 3ա հասցեում նախատեսվող Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման լրամշակված հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն, խմբ. 3.05.24թ.) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. հոկտեմբերի 23-ին ժամը 14:30-ին՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական ղեկավարի նստավայրում, կայացել է «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի Թատերական փողոց 3ա հասցեում նախատեսվող Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման լրամշակված հաշվետվություն վերաբերյալ հանրային 2-րդ լսում:

Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի (նախաձեռնող) Վանաձոր համայնքից՝ համայնքապետարանի աշխատակիցները, թատրոնի աշխատակիցները, բնակիչները, ինչպես նաև շահառու համայնքների ներկայացուցիչները:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և խնդրեց հանդիպման մասնակիցներին ներկայանալ:

**Հ. Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքննվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ, վառելիքի

արտանետումները շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, առաջացող թափոնների, աղմուկի և թրթռման հետ և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արման Խաչատրյանին («ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ) և խնդրեց մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը և շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումները: **Արման Խաչատրյանը** մանրամասն ներկայացրեց Վանաձոր բնակավայրում Թատերական փողոց 3ա հասցեում նախատեսվող Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կառուցման աշխատանքներին, և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը, որից հետո խոսքը փոխանցեց նախագծողին և խնդրեց ներկայացնի նախագծային լուծումները:

**Նախագծող կազմակերպության ներկայացուցիչը** ներկայացրեց նախագիծը, հավելեց որ առաջին լսման ժամանակ բարձրացված խնդիրները լուծվել են:

**«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ**-ի ներկայացուցիչը հարց բարձրացրեց սակավաշարժ խմբերի համար նախատեսվող թեքահարթակների վերաբերյալ և հավելեց որ ներկայացման մեջ չեք անրադարձել դրանց, ինչպես նաև հավելեց որ սուբվենցիոն ծրագրի միջոցով հարակից փողոցները վերանորոգվել են և դրանց վնասման դեպքում, որը անխուսափելի է ով է դրանք վերականգնելու, նաև հավելեց որ Թատերական փողոցը հիմնական փողոց է և ծանրաբեռնված ինչպես պետք է մեքենաների շարժը կազմակերպվի:

**Նախաձեռնող կողմի ներկայացուցիչը պատասխանեց** որ այո համաձայն եմ ձեր հետ քանի որ ճանապարհների վնասումը անխուսափելի է դրանց վերանորոգումը ներառել ենք իրականացվող աշխատանքների մեջ, իսկ մեքենաների կայանման համար նախատեսվում է հնարավոր ազատ տեղերը, քանի որ տարածքը խիտ կառուցապատված է:

**Համայնքապետարանի ներկայացուցիչը** ասեց, որ նախորդ լսման ժամանակ ասել էիք որ ճանապարհները չեն վնասվելու իսկ հիմա կա այս խնդիրը, և ասեց որ փողոցը մեր կողմից ամբողջությամբ վերանորոգվել է հետագայում վնասվելուց հետո նախատեսեք որ ամբողջությամբ վերանորոգվի այլ ոչ թե հատված հատված:

**Նախաձեռնող կողմի ներկայացուցիչը** պատասխանեց որ մենք ամբողջ ճանապարհի մասով ենք նախատեսել ասֆալտապատման աշխատանքները:

**Համայնքապետարանի** մեկ այլ ներկայացուցիչ հավելեց որ քննարկումներ և հանդիպումներ ենք ունեցել թատրոնի ղեկավար կազմի և աշխատակիցների հետ, ԿԳՄՍ նախարարության, Քաղաքաշինության կոմիտեի համապատասխան մասնագետների հետ, և որպես նախագծի խորհրդատու հավելեց թե ինչ փոփոխություններ են կատարվել 1-ին նիանրային լսումից հետո:

Հարցեր հնչեցին նախագծային լուծումների վերաբերյալ, աշխատակիցների սենյակների, գրիմանոցների, սանհանգույցների վերաբերյալ, որին ի պատասխան նախագծող կողմը ցուցադրեց բոլոր ճարտարապետական լուծումները:

**«Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ի** ներկայացուցիչը հավելեց որ Լուսավորիչ փողոցի վրա կա հատված, որը համայնքային սեփականություն է, որտեղ կա ապօրինի կառույց, որի ապամոնտաժումից հետո քաղաքապետարանի հետ քննարկման արդյունքում կարող ենք այդ տարածքը օգտագործել որպես կայանատեղի:

Հարցեր հնչեցին թե քանի տարում կկառուցվի նախատեսվող շինությունը, և նախագծող կողմը պատասխանեց որ ըստ թույլտվության 2 տարի ժամկետ է նախատեսված և ևս մեկ տարի երկարաձգման հնարավորությամբ, ինչին ի պատասխան Թատրոնի դերասանների կողմից օրինակներ և դժգոհություններ հնչեցին որ անհնարին է որ նշված տարում ավարտվի և օրինակներ բերեցին դրա վերաբերյալ:

Թատրոնի ներկայացուցչը խնդրեց որ տեղ հատկացնեն քաղաքապետարանը այդ ժամանակ որպեսզի դերասանները հնարավորություն ունենան իրենց փորձերը անեն, և ծավալվեց թեմաներ դրա շուրջ, և երկուստեկ հետագայում պայմանավորվածություններ ձեռք կբերվեն:

**Հ.Ֆրունզիկյանը** դիմեց քաղաքապետարանի ներկայացուցիչներին, որ հետևողական լինեն կատարվող աշխատանքների ժամանակ տողափոխվող շինաղբի, անվադողերի լվացման հարթակի պարտադիր տեղադրման, ջրցանի իրականացման աշխատանքներում, և հավելեց որ անհրաժեշտության դեպքում տաք և չոր ամիսներին իրականացնել օրական 4 անգամ ըստ անհրաժեշտության, և հարց բարձրացրեց կոյուղու համակարգի վերաբերյալ:

**Նախաձեռնող կողմի ներկայացուցիչը** հավելեց որ ամբողջ տարածքը սահմանազատվելու է, շինաղբը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր, կենցաղային աղբի կտեղափողվի համայնքային աղբամաններ, իսկ կոյուղու վերաբերյալ ասեց, որ կա կոյուղու համակարգ Լուսավորիչ Փողոցի վրա որին էլ կմիանա, սակայն խողովակներ կփոխվեն և այլն, ինչին ի պատասխան համայնքապետարանի ներկայացուցիչը հավելեց որ եթե ճիշտ ենք հասկանում կատարվող աշխատանքների ընթացքում ամբողջ հարակից ճանապարհները քանդվելու են՝ մասնավորոպես Թատերական, Լուսավորիչ, Սոս Սարգսյան փողոցները և ևս մեկ անգամ հավելեց որ առաջին հանրային լսման ժամանակ նմանատիպ ոչ մի հարցեր չեն բարձրացվել:

**Թատրոնի դերասաններից՝ Մայիս Սարգսյանը** իր մտահոգությունը հայտնեց կապված շինաշխատանքների ավարտման ժամկետների հետ և ասաց անհավանական են և օրինակներ բերեց փաստացի:

Այլ հարցեր չհնչեցին և **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

Հանրային լսումների պատասխանատու և վարող՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն «ՊՈԱԿ» ՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

«Քոնսեկոարդ» ՍՊԸ-ի տնօրեն/ներկայացուցիչ՝